



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

18 16
18 17
18 18
18 19

41

84

7 - 31

891.99-31

ՆԵՏԱՀԱՐ ԱՂԱՐԵՒԻ

Գ Բ Ե Յ

ԽՈՐԵՆ ՇՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆԹԱՐԵՍ. Դ.



ԶԱՀԻՉՈՒՆԻԱ

ՏՊԵԳՐՈՒԹԻՒՆ ՏԵՏԵԵՎՆ

1889

Յ Ե Ո Ե Ք Ե Բ Ե Ն

725

Վ էպերը , որք անցեալ դէպքերը և արկածները
ժամանակի վլատակաց տակէն հանելով , նոցա իսկական
պատկերները ի յայտ կը բերեն , նոքա գործնական կեր-
պով կընպաստեն ընթերցողաց բարոյական ուղղութեան
և մտաւորական զարգացման :

Վ էպերն ամէն առաջադիմասէր ազդաց մէջ իրենց
յարդ գտած և օգտակար համարուած են , և լուրջ
վէպերը միշտ սիրային վէպերէն աւելի ախորժելի երե-
ցած են ողջամիտ լսելեաց : Ասկայն ըստորումբնութիւն
մարդկանց հաճոյքները և փափագները թէ միապէս կազ-
մակերպած չեն , և թէ միապէս կազմակերպեալները իսկ
փոփոխական եղանակներու մէջ պահել սիրած է . ուստի
ոմանք հաճոյականը և ոմանք լուրջը կըսիրեն և բազում
այն է թէ՝ միեւնոյն անձինք մերթ լուրջը և մերթ սի-
րայինը կուզեն լսել . և մենք այս մասին ձեռնհաս չեմք
բնութիւն քննադատելու : Ուրեմն պէտք է որ մեր
“ Ա ետահար Աղաւնիի ծաղկաբաղ վիպասանութիւնը
այնպիսի մի ընթացքի մէջ պահեմք որ կարողանայ թէ
երկու կողմանց հաճոյքներուն գոհացումն տալ , և թէ
մասնաւորապէս օգտակար հանդիսանալ ամէն կարգի
ընթերցողաց :

Ըստներ կան թէ՝ սիրային վէպերը ընթերցողաց
բարոյական կեանք կապտականեն . պնդողներ ևս կան թէ
աէրը մի բնական օրէնք է , որ ամէն մարդու սրտի մէջ
կայ . և նա ինքնին իւր յայտնի կամ գաղտնի դերը կը-

20 28-57 2

խաղայ. և թէ պատահած է որ շատերու վրայ չանանուիր, ասոր պատճառն այն է որ համեստութեան պատկառանք և անպատութեան երկիւղը իրենց վարադոյրներով կրծածկեն և թագուն կըսահեն զայն մարդկանց սրտի մէջ:

Այսոյդ է թէ՝ սիրային վէտերը հեշտական կիրքերը կը յուղեն. նաև ճշմարիա է թէ՝ նորա աղետալի հետեանքներն ուշի ուշով կարդացողներու շատերն ալ զգուշացած և յաջողած են իրենց կեանք և պատիւ փրկելու այդ յատակ ջունեցող լարիրինթոսէն. զի սիրային վէտերը երկու հրաշալի ձեռք ունին, մէկով սիրոյ կրից բոցերու վրայ իւղ լեցնելով զայն կըբորբռեն, միւսովն ալ ջուր սրսկելով նորա սաստկութիւն կըմեղացնեն և կըշիջուցանեն :

Վաենք մեր ձեռնարկած փոքր վիպագրութեան մէջ աշխատած եմք համեստ սահմանի մէջ ընթանալ. և միջին ճանապարհաւ մը երկու կարդի անձանց համայքներու գոհացումն առաջ հանդերձ օգտակար սպեղանիներով. միայն թէ կըխնդրուի յարդոյ ընթերցողներէն որ թերութեանց վրայ ներողամասութեան աջով նային :

Խ. Ե. Ա.

ԹԱՆՈԹ-ՌԻԹ-ԻՒՆ

Ա, ԵՊԱՀԱՐ ԸՆ-ՆԷ ապահով վեղը համուկէ ի-ը Տէջ բնութեան ուսուրանի, և անապահութիւն, և անու հը նո-իրահան ինչ էն նիւրակու-նիւրակու-նիւրակու, երկու նա- դատական սաւորներու արդարադարու իրած անուց նիւրա- գու-նիւրակու, և նոցա ինուրակու-նիւրակու ու գուտական իսուները, լունականի ու նշանա-ու իսուները անյնու-էն հարդասէն- նիւրակու, ուսու հետեւու եղող հասկածը, բանա, գնուն-նիւրա- կու, և աղադարու-նիւրակու, բանադարին-նիւրակու, Ա անէն լուրջ ինուրակու- նիւրակու-նիւրակու, նոցա բանադէն ապահու-նիւրակու, անախու-նիւրա- յարդու-նիւրակու հը :

Աընկարագու-ի սոյն վեղի Տէջ Ա անէնի և ԸՆ- նիւրակու-նիւրակու, նա-ի ինուրակու-նիւրակու, նոցա ուրացու իսուները, նոցա գանի ու նամակաց գոխանակու-նիւրակու, Ա անէն վերա- դարյը և վերադարյու-նիւրակու գոլ և ի-ը նշանածի վերջն գո- մէն- հասնէլը ԸՆ-նիւրակու ու Ա անէն հանը :

Ընա ասոն+ էն Ա, ԵՊԱՀԱՐ ԸՆ-նիւրակու նիւրակու, պար հարեւ է նշանածին լադ ինամուշ պատրաստու-ած ինը օդուու իւր վեց ի ընծանու-է յարդոյ ընթերցուիցաց :

ՅԱԻԱԼԻ

ՀԱՐՄԱԿԽՈՍՈՒԹԵՒՆ ՄԸ

Աշնան ամիսներու այն թարելի օրերու մէջ կըդտնուիմք , յ՛ս . րում ամէն սերմանողները կըհնձեն բնութեան առած բարիքները . և կըժողովնեն կ'շտեմարաննեն ձմեռը հանգիստ վայելելու յուսալիր ախնկաթութեամբ . Ըստ տեղական կլիմայի և սովորութեան վանայ դաւառի այգիներու խաղողները կտրելու ժամանակն է , սոյն գաւառի զիւղերու մոյն մէջ խիստ զուարձալի և պտղաւէտ պարտէզներ և այգիներ կան . որոց ոմանք զիւղացւոց , և ոմանք ի մասնաւորի քաղաքացւոց կըվերաբերին . թէ զիւղացիք և թէ քաղաքացիք գարնան բարեբեր դռները բացուած ժամանակ կերթան այգիներու հնամը բնակելու , զով օդերը ծծելու , ծառերու ու ծաղիկներու անուշահոտութիւնները վայելելու : նաև իրենց այգիները ու պարտէզները մշակելու , սերմանելու . ջրելու . աշնան օրերու մէջ քաղելու քաղցր յուսով .

Այս ամառնային երկար օրերու մէջ , զիւղացին իւր այգին և պարտէզի գործերու հետ նաև իւր ուրիշ գործերով կ'զբաղեն ըլքէս որ քաղաքացին ալ . ամէն առաւօտ քաղաք զնալով իւր առևարական գործերով կ'զբաղի , երեկոյ վերստին դիւղի այդույն հնձան կըվերադառնայ իւր ընտանեաց և զանակաց հետ նախախնամութեան բարիքները վայելելու . և բնութեան սքանչելի տեսարաններով զմայլելու . և քաղցր հեղասիք փշած զեփիւռներէն զսվանալու և ուրախանալու բնութեան բարեաց վրայ : Խիստ սրտադրաւ է այս զիւղական պարզ կեանքը իւր անմեղութեամբ և տեսարաններու զեղցիութեամբ . մանաւանդէրք արշալյսի բարի լուսոյն հետ լեռներէն իջած զղղղուն զեփիւռները բնական ծաղկանց անուշահոտութեան բուրումները իւ

րենց թևերու վրայ բարձած կը բերեն , և այդիներու , ձառերու տերեներուն շփելով և սուլելով մը անցնելէն յետոյ՝ կը տանին այն հնաններու տանեաց վրայ քնացող մարդկանց նոր կեանք մը և զուարթութիւն մը տալու : Այս զմայլելի երջանկութեան կը յաջորդէ ցորեկեայ փշած ծովային հանդարտ հովերը , որք նաւերու առագաստներու մէջ լեցուած և զանոնք ուռեցնելով կենդանութեան ողի և թռչնոց թեւ կուտան այն տախտակամած մարմայն որ կոհաններու վրայ եւ էջ ընելով յացարյու և յայնկոյս թաւալլոր ճօնումներով սթարշաւ կուղան իրենց դէմ եղեալ նաւահանգիստ կը համին լի հազարաւոր բարիքներով , այս տեսարանը ոչ սակաւ բերկրութիւն կուտայ մօտէն տեսնող հանդիսատես աչաց :

Գիւղացին և քաղաքացին այս անմեղ և քաղցր կեանք կը վայելեն մինչև աշնան օրերու մէջ , յորում աշդիներու խաղողները կտրելով դինիները կը շինեն . քաղաքացին ի քաղաքը զիւղացին իւր զիւղի տունը կը փոխադրեն դինին , և այդիներէն եկած ամէն պտուղները և բարիքները :

Այս ամեսոնային զուարթ օրերու մէջ այդիներու բնակիչն զիւղացի և քաղաքացի կանայք , և նոցա փոքր զաւակները և աղջկունք , որք այգույն հնաններէն չեն բաժնուիր , նոքա իրենց առոտնին գործերը գործելէն և աւարտելէն վերջ , զիւղացին քաղաքացւոյն , և քաղաքացին զիւղացւոյն փոխադրձ այցելութիւնները կը վայելէին , բատ տեղական սովորութեան այս բարեկամական այցելութեանց և յարաբերութեանց մէջ մինչև աստիճան մը իրարու կը համակերպէին . այնպէս որ զիւղացին կէ օքաղաքացի , քաղաքացին կէս զիւղացի կը դառնան : սոյն յարաբերական վիճակը դիւրութիւն կուտայ իրենց միմանց բարք և բնաւորութիւն , բարոյական և նիւթական կարօղութիւն շօշափելի կերպով ճանաչել , և ստէապ պատահած է որ բարեկամական և զրացիական յարաբերութենէն առաջ եկած են խամիթեան և աղջականութեան ընտանեկան սիրոյ կապերը :

Այս ինամական օրինոյ կապը մնատք զտաւ դիւղացի Ա. ահա և քաղաքացի Յարութիւն աղայի ընտանեաց մէջ . զի Յարութիւն աղան որ Ա. ահա և զորոցական կեանքէն սկսեալ մինչեւ նորա

տուկի չսփառութիւն խիստ լաւ կերպով տեսած . և ի մօտոյ հանաւած էր նորա պարկեշտ և քաղցր բնաւորութիւն և ժրածան աշխատութիւն , թէ և Ա. ահա մեծ հարսաւութիւն մը չունէր սակային աշխիւ գերգաստանէ սերեալ աղջիւ յատկութիւններով օժտեալ ուսեալ երիտասարդ մի էր : Սոյն րարի և աղջիւ յատկութիւններէն յափշտակեալ Յարութիւն տախ ինքը կ'առաջարկ կէր Ա. ահա էին խր ուսեալ և համեստ Աղանի աղջիկը անոր հետ հշանելը , և արգէն Վահէ և Վաղանին իրենց մանկական հասակէն և գալրոցական շրջանէն սկսեալ միմանց անմեղ ընկերները էին և միշա իրարմէ անրամաննելի զի գալրոցէն գառնալէն վերջ վարդենիի մը տակը սուսունպէրներու վրայ նստած կը հրգէին : կ'ուստանէին և կ'ուսուցանէին , և անմեղ խալերով կը իւաղային . և զիրար կը սիրէին հրեշտակային անմեղ և սուրբ սիրով . նոյց այն մաստաղ հասակի մէջ այնպիսի մի անմեղ կեանք վայելել խիստ բնական էր . վասնզի տակաւին բնութեան օրէնք արթընցած չէր այն նորաբողբաջ սրտերու մէջ . ուստի նոյցա հրեշտակային սոյին անխառն ախտաւոր կիրքերէ , անմեղութեան թևերու վրայ նստած կը սաւառոնէր :

Աղաւանին որ գեղանի աղջիւ մի էր խիստ ընտիր յատկութիւններով օժտեալ նաեւ ունէր իւր վայելու չասակի հետ զրաւիւ և աղգեցիկ ու բանաստեղծական ճաշակ մը , այս նորհալի աղջիւ , ինչպէս որ առաջ այսպէս ալ նշանուելէն վերջ մեծ սէր և համակրանք կը տածէր առ իւր ապարայ սէրը բախուը և ընկերը , Աղաւանին մարմնով առուգ գէմքով վայելու մոօք կորովի սրտով աղջիւ . սակայն քիչմը հպարա բնաւորութիւն մը ունէր . Աղաւանի և Ա. ահա էին նշանատուութենէն վերջ ըստ տեղական սոլորութեան երկար ժամանակ իրարմէ անտեսաննելի մնացին :

Ա. ահա բարեմանութեանց վրայ շատերը մեծ դովեստիւ ք կը նօսէին . բայց նա իբրեւ իւր գործերու տէր և հեղինակ անփոյթ կը մնար իրեն վրայ խօսուածներու մասին . նորա ըոլոր ուշակութիւն իւր գործերու ընթացքին և առաջադրեալ նպատակին յառած կը նայէին . կը սէր նա . ես իմ պարտք կատարելու կաշխատիմ . մնացեալն ինձ փոյթ չէ թէ գովեստ լինի և թէ

պարսաւ . շատ է որ խիլջս զիս չ'յանդիմանէ : Աղաւնին նս տղին-
տեսադիտութեան մէջ մեծ տեղմը կըբռնէր . և առտնին դործոց
մասին յատուկ կին մը և զաւակաց մայր լինելու արժանաւոր կո-
չումն ունէր իւր բարի մօրը դաստիարակութեան շնորհիւր .
Եթէ պատահէր որ երբեմն վահէ և Աղաւնին զերար տեսնէին ,
իրարու հետ ունեցած համակրական սիրոյ զգացումները այնչափ
արադ կերպով կը ծածկէին , որ իրենց շուրջ դտնուողներու և
ոչ մէկին զգալի կըլինէր : Այս երկու նշանածները իրենց ման-
կական խալերու ժամանակ բնաւ իրենց մտքէն չէր անցնէր թէ
բնութիւնը նախախնամական մէկ զաղտնի տնօրէնութեամբ օր
մը ընկերական սիրով ասոնք միմեանց հետ կապելու տնօրէնու-
թիւն պիտի ընէ :

Աերջապէս հասաւ Աւարագայ խաջը , որ Անայ այդիները
կտրելու նշանակէտն է . և ամէն մարդ իւր այդին կտրելով
խողողները ժողովելով զինիները կը շնէին . զիւղացին իւր
դիւղի տունը քաղաքացին իւր քաղաքի տունը կրփոխադրէին . և
ասոր բնական հետեանքն էր որ Աղաւնին քաղաք և Վահէն ալ
իւր զիւղական տունը պիտի դառնային . խիստ բնական է թէ ,
այս առժամանակեայ բաժանումը ոչ Վահէի և ոչ Աղաւնիի նոր
սիրոյ բոցավառ զգացմանց կը համապատասխանէին , բայց հարկին
առջե զլուին խոնարհելէն ի զատ ուրիշ միջոց չ'կար . Գիշեր-
ուան զով օդը սկսած էր ծառերու տերեները շարժել . և լու-
սինը իւր ամրող ջերեոյթով կուզար գեշերուան խաւարը հալա-
ծելու և բնութեան տեսարանը դեղեցկացնելու :

Սոյն միջոյին երկու նշանածները երեկոյեան ընթրիքն ըրած ,
մասնաւոր թոյլտուութեամբ մը խորադէտ օձու սկէս թուփերու
մէջէն ծառերու ետեւէն սողոսկելով կուգային իրենց մանկական
որորան եղող վարդենիի տակ թարշամած ծաղկաստանի խոնաւ
գեանի վրայ նստելու . այն պահուն էր որ բաժանման տխուր
անջրպետը երկուքի սիրոն ալ սկսած էր խորովել : Այս սիրա-
ծին երկու նորափիթ նշանածները ի հարկէ սիրոյ վերաբերեալ
շատ մը խօսքեր այս փոքր առանձնութեան մէջ չէր կարելի որ
խօսէին . վասնդի թամանակի կարձութիւնը թոյլտուութիւն չէր
ընէր իրենց , բաւ համարեցին քանի մի սիրայօդ քաղցր խօսքերը

միմանց փոխանակել . և ի վերջոյ Աղաւնին համակրական մը-
պիտով մը ըսաւ Աւահէին . ընկեր մեր այզիի խաղողները կտրե-
ցինք և զինին քաղաք փոխադրեցինք վաղը իրարմէ պիտի բաժ-
նութիմք . վասնդի հայրս այսպէս անօրինած է . թէև չեմ ուզէր
ձեզնէ և ձեր անկեղծ սէրէն բաժնուիլ . բայց ըստ որում հօրս
հրամանն այսպէս է հպատակել պէտք է : Որուն ի պատասխանի
կըսէր Աւահէն : Այս սիրելի ընկերս , մեր ծնողաց հրամաններուն
հնաղանգելու պարտաւոր եմք . վասնդի անոնցմէ աւած եմք մեր
կեանք և գոյութիւնը . և մենք անոնցմով կրնանք երջանիկ լի-
նիլ և զիրար վայելել . ուրեմն մայք բարեաւ . անմահ պահէմք
մեր սիրոյ յիշաւակը . ի կրկին տեսութիւն դարձեալ այս տեղը
և այս վարդենիի նոր բացուելիք կոկոններու տակը եկող գարուն
եթէ Տէր կամնցի : Փոքր սրտայուղութեամբ մը իրարմէ բաժ-
նուեցան երկու գեռափիթիթ ծաղիկները եկող դարնան զիրար
տեսնելու մծ յուսով :

ՀՄԵՌ ԵԽ ԳԱՐԱՆԱՆ ՍԿԻՖԻՑԻՆ

Սերոյ Ճանապարհէն անցնողները միայն զիտեն թէ ձմռուան
մի քանի ամիսները որչափ յամը կը քալէին Վահէի և Աղաւնիի
համար . այս քանի մի ամիսները քանի մի հարիւր տարիներ
կերկին նոյա աշքին . սէրը այն արագութեամբ կուզէր գարունը
ձեռք բերել և իւր նսպատակին հանել , ինչ արագութեամբ որ
ելեքդրական կայծը անմիջական կերպով կը զարնէ իւր նսպատա-
կին : Վահէ սիրոյ կուան ի ձեռին իրեւ դահիճ , ձմռուան
տխուր օրերու շղթաները խորտակել կուզէր . սպասուած գա-
րունը ձեռք բերելու յուսոյ ակնկալութեամբ Աղաւնին
այնպէս անհամբերութեամբ կ'սպասէր բերկրալի դարնան հաս-
նելու , ինչպէս որ սոխակը կ'սպասէ վարդի բացմանը : Սակայն
բերկրութիւն և ուրախութիւնները տեսական չեն , ամէն բերկ-
րութեան վարտղորի ետեկի կուլը արտօնը մը կայ թագուն

պահուած . որ օր մը ուշ կամ շուտ երեան կողայ և ի՞ր չետ
կըրեթէ ու բախւթեան յաջորդ վէշտ և տիրութիւն . Նախա-
զայում մը կայ ոս մարդոյս ուրախութեան օրերու մէջ մարդ-
կանց սրտին տիրութեան աղդաբար հնչակը կըզարնէ . յայնժամ
մարդն իւր ուրախութեան մէջ տիրութիւն մը կ'զ այ , և չե-
ղիտեր թէ պատճառն ի՞նչ է , այս օրերու մէջ ձիշտ այս սր-
խոր վիճակն ունէր Ալաւնին , և իրականութիւն գտաւ նուա
սրտաճմիկ նախադաշտումը երբ յանկարծ հետեւ նամակը
տեսաւ իւր գրասնդանի վրայ :

Ազնիւ ընկեր

Մարդիկ ոլլիիանոսի ալեաց պէս կորաքրանան և կրխոնարհն
կրբաղխին ժայռերուն և կ'անդրադաւնան կ'ոգեգրին և կրփըրին,
այս աշխարհի զործերը մեծ մասամբ մարդկանց իլձերէն և փա-
փալներէն հիւսուած և կազմակերպուած շղթայ մի է որու վեր-
ջի օղակին հասնելու համար անթիւ հնարքներ և ջանքեր ի
զործ կըրնեն . սակայն հոն աներեսոյթ դաշտուի ձեռք մը կամ
զօրութիւն մը կայ թագուն պահուած , զր մարդկանց հնարքնե-
րով և աշխատութեամբ հիւսուածները կրխորտակիւ : Այս պա-
րագայիս մէջ մարդկանց մտաւորական կեանք կ'սկսի պահ մը
եանգ առնուլ , և հաւատք կըկազմէ համուլով թէ իւր իւր
գործոց վրայ իշխելու աղատ հեղինակ մը չէ , որով կըհարկա-
բուուի ընդունել բազդ և հակատագիր . զէպք և պատահոր ,
և կամ թէ երկնային հեղինակո թեան ոչ կամցութիւնը :

Մինչ ես հանողամ կազմած էի թէ նիւթական կարողու-
թեամբ երջանիկ եմ . բարյատէս երջանիկ եմ . և ձեր սիրոյ
վրայ սաւառնելով ինքնինքս երջանիկ կրկարծէի , և աշա յան-
կարծակի չ'սիաեմ թէ գէպք թէ պատահմունք . բանս թէ
հակատագիր . և կամ թէ ասսուածային դաշտնի մէկ տնօրէ-
նու թիւր մեր նիւթական հարստութեան մէկ շորորդ մարդ ջն-
ջեց . Սիրելիս , նիւթական հարստութեան մեծ նշանակութիւն
ու ուներէն չեմ . բայց հանգիստ և պատուաոր ապրելու նա-
խանձախնդիր եմ , գիտէք թէ ուսկին ինքն ըստ ինքեան անարժէք
է . սակայն աշխարհի վրայ եղած ամէն բանի արժեքը ցոյ ց
տուող մետաղն է : Անիւա այսօր երկրիս վրայ իշխու բացար-

ձակ թագուհի մի է , որ ամէն բանի վրայ կեշեւ նա անդիմա-
գրելի զօրութիւն մը ունի , և խիստ յաջողակ է թէ շնորհու և
թէ քանդելու մէջ . ոսկոյ բանալին ամէն սրտերու գոներ կը-
բանայ և առաքինութիւն անոր առ չեղը կըտկարանայ մեծութիւն
պնոր առաջ կընուաստանայ , անիկա սուր տէդ մը ունի , որով
շարունակ զարդարութիւն կըմիրաւորէ . թէպէտե արդարութիւն
շարունակ լալով կըբոլովէ անոր գէմ . օրէնք զայն տեսած ժա-
մանակ իւր ընթացքը կըփոխէ . անիկա ամնականդուները կը-
ծուէ . և ողիղները կըխոտորեցունէ , խոնարհն կըբարձրացնէ ,
բարձրեալն կըխոնարհեցնէ . անիկա Աստուած մը չէ բայց հին
աստուածներու չափ կըհրաշաղործէ : և մարդկանց վրայ կիշխէ ,
ասոր համար հարկադրուած եմ կորմցուցածս պատուաոր աշ-
խատութեամբ ձեռք բերելու համար առ ժամանակեայ կըբազվ
ծովային ճանապարհորդութեամբ ողերութիւն մը ընելու , կը-
խնդրեմ որ չափէն աւելի չափրիք լմ առ ժամանակեայ բացակայ-
ութեանս վրայ , իրեք օրէնք վերջ կրմելիմ սէրս և սիրս ձեզ
թաղլով յիշատակս մի մասնայք , մայք բարեաւ ի կրին տե-
սութիւն . . .

Ազնիւ ընկեր

Ափացայ ձեր դրութիւն . որով կըյայտնէք ձեր նիւթական
հարստութեան մէկ մասի կըրուսոը , որու տեղը լեցնելու համար
ձեր ծովային ճանապարհորդութեամբ առ ժամանակեայ պանդի-
տութիւն եային . Եւ զիս կը յորդորէք որ չտիրիմ : Սիրելիս ,
ուկին կամ հարստութիւնը չէր որ իմ սէրս ձեր սրտի հետ կա-
րուց . այդ ձեր վեհ հոգոյ ազնիւ յատկութիւններն էին . որ
լով սէրս և սիրս զրաւեցին . ի՞նչէ մարդուս կեանքը եթէ ոչ
ծնունդը . ի՞նչէ մարդուս վախճանը եթէ ոչ մահը , ծնունդ և
մահ երկու բենաներն են , մէկի ծայրէն կախուած է ամբողջ
մարդկութեան կեանքը , միւսի ծայրէն կախուած է նոցա վախ-
ճանը . որեմն մարդկութեան շղթան ծննդեամբ կըհիւսուի մահ-
տանէն կըխորտակուի . մէկսկսի միւսով կըմիրչանայ ,
ծնունդ կըհիւսուի աբարչափատական կենսական անմահ ցոլոյ
ույն մէկ կաթիւն , որընութեան հեղինակն աբարչափործութեան
ժամանակ զեսելեց մարդկութեան մէկ խորչ մէջ լրիւ կենդա-

Նական և անմահ յաջորդական հոսումն իւր անսպառելի աղօքիւրէն : Տիեզերական ամբողջութիւն մը կայ. թէ կենդանին և թէ մեռեալները այս ամբողջութեան մասունքներէն են : Ստոյգ մահ չ'կայ, մահը վերածնութեան սկիզբն է, այն որ կըմռոնի իւր յաջորդին տեղ մը կըբանայ այս աշխարհի վրայ : Ընկեր, այս աշխարհի կեանքը ծաղիկներէ և փուշերէ բաղկացեալ ահազին տարածութիւն մի է, որ միշտ կըկազմակերպի և կըքայքայի . մարդիկ յանդէսս ասոնց մէջ կըսաւառնին, մերթ ծաղիկները հոտսաելով, մերթ փուշերէն խայթուելով, մարդկութեան շարքը երկու կարգի կըվերաբերի անոնք որ նիւթի հետ կապուած են, նոքա չեն ուղեր որ կենաց կապը խղի, հոդ չէ որ վարդը հոտսաած ժամանակ նորա փուշերէն խոցուին : Խոկ հոդոյ անմահութեան կուսակիցները շուտով լուծուիլ կուզեն զիւենք կաշկանդող թանձրացեալ մարմնէն, որ երթան այն տիեզերական մշտնջենաւոր անմահութեան մէջ մտնեն . այս կենաց մէջ թշուառներու մինիթարութիւնը իրենց հառաջանք և արտասուքն է . ընդհանուր մարդկութեան բաժինը է տառապանք վհատութիւն և մթութիւն : Եթէ մարդիկ այս տիեզերական մթութեան մէջ քանի մի երջանիկ օրեր վայելեն, այն ալ շատ շուտով կըթաղեն անցելոյն զերեզմանի մէջ . վերստին իրենց բաժին կըմնայ մթութիւն և խաւար ու արտասուք . ահա ասոնք են որ ծնունդ կուտան մարդկանց հոդոյն թոքախտի հիւանդութեան . առաջ բերելով նիւթական և բարյայական մահացույիս ցաւերը, որոց մէջ մարդիկ լալով և ողբալով կ'սկսին իրենց հոդոյն կարողութիւն կորսնցնել և մահացնել :

Ի հարկէ ես ալ այս համատարած մթաւթեան մէջ իմ բաժին ողբ և ցաւերս սիխտի ունենամ ձեր բայցակայութեան միջուցին : Վահէ, իղձերս կ'ստիպեն զիս ձեզ ըսելու մի հեռանայք ձեր հայրենիքն և ինձմէ, բայց բանականութիւնը բաղձանաց սանձ դնելով կըսէ, առաջադիմութեան առջեր քար մի գներ, համբերող եղիր, չեմ կրնար զձեզ արդիլել, երբ զիտեմ թէ ամէն զօրութիւն շարժում առաջ կըբերէ շարժումը կըծնանի չերմութիւն, չերմութիւնը լոյս կարտադրէ . լուսոյ մէկ նշոյլը մարդկանց թափանցած է, որուն մնիք բանականութիւն կըսեւիք, որ միշտ կըշարժէ և կըդորձէ :

Ցիեղերական ամբողջութեան մէջ շարժման օրէնք մը կայ- զէ երկինք յարատե լոյս կարտադրէ լուսաւորելու . բնութիւն կըդորձէ բեղմնաւորելու . այս մշտատե շարժման աշխատութիւն կըսուի, որ Արարչի մի անսխալ օրէնքն է . եթէ շարժումն դադրի՝ լեռները ովկիանոսներու մէջ պիալի խորասուզին . աշխատութիւն բնութեան նուազն է . ամէն բան անոր մէջ կըթռութոյ լցոյր յաւիտենական անեզր անմահութեան մէջ շարտնակ կըշարժի կեանք զործունէութիւն է . անզործութիւն մահ է և մեռելութիւն : Լինելն աշխատութեան պտուղն է, այն որ չաշխատիր, անիկա չ'կայ : Մարդս չհանդիր թէպէտ նորա մարմնը կըթմրի . բայց բանականութիւն կերաղէ մաքր կըհանդիր . բայց արիւն չհանդիր . թոշունը կերպէ, ծաղիկ իւր բոյս կըծաւալէ . ուրեմն մարդս ալ պէտք է որ հպատակի տիեզերական բարձրադրոյն շարժման օրինաց իւր կեանք և պատիւ պահպանելու համար : Աստուածն անզամ շարժման մէջ է . վասնզի իւր ամնազօր կարողութենէն միշտ անընդհատ լոյս կըրզիսի բռուրոր էութեանց շարժումն և կինդանութիւն տալու համար :

Նոքա դատարկութեան եղրայրադիրներն են . որք առանց նպատակի անզործութեան կըդատապարտեն իրենք զիրենք: Նոքա չտեսնուելու համար երկորեակ քոյրերու սառւերներով կըծածկուին՝ այն է տղիսութիւն և խաւար զիշերոյ : Եւ հողմ արածելով կըմնանին :

Պահէ, բանականութիւն չներեր ինձ սիրոյս շղթաներով սիրտդ սեւեռել, և զձեզ իրբե զերի իմ սիրոյս ետեւէն քաշել թէն իղձերս կուզեն որ այնպէս վարուիմ ձեզ հետ, միայն այս շափ կըսեմ թէ այս աշխարհ մի նուազարան է, որու ներդաշնակ ցնցումէն առաջ կուզայ մշտահոս սէրը, այն սէրն է որ իմ սիրտս ձեր վեհանձնութեան հովանուոյն տակ զիտեղելով ձեր պաշտպանութեան յանձնեց, ուրեմն բայցակայութեանդ մասին չափէն աւելի չեմ ուղեր տիրիլ սակայն պիտի մահանամ՝ երբ իմ սէրս քու սրտէդ հանելով զիս մոռանաս :

Մարդ մը այն ժամանակ միայն ամենաթշուառ կըհամարտի . երբ կըսիրէ փոխադարձ չսիրուիր . եթէ մտրդկանց վակադահաց լրումն կայ . այն ալ իրենց զեղեցիկ երազն երու իրականուա-

թեան հասնելն է : Աւահէ , աշխարհի և ոչ մէկ վայելք կրնայ սիրոյ ծածկոյթ լինիլ և դիտեք թէ զօրաւորն ուրիշի պէտք չունի . տկարն է որ նեցուկ կրինառէ և իմ նեցուկս սէրս և սիրտ ու պատիւս ես : Եղատ կը թողում գքեզ զնալ ուր որ կամու , որբան որ մնաս . միայն ազատ չես իմ սէրս և միշատակս մոռնալ , խաղաղութեան Տրեշտակի պաշտպանութեանը կը յանձնեմ զքեզ , երթաս բարեաւ խաղաղութեամբ վերադարձիւ յուսով կ'սպասեմ :

Աւահէն արդէն պատրաստուած էր Ճանապարհ ելլելու և ծովու եղերք զինք սպասող նաւը մանելու . երբ Աղաւնի նամակը ձեռքը հասաւ . կանգ առնելով կարդաց , աչքերէն քանի մի կաթիլ արտասուքները վաղեցին . որչափ որ ուզեց իւր զգացում ները ծածուկ պահել . այնչափ ալ շուտով զդացին իւր շուրջ զտնուղները թէ այն նամակը իւր նշանած Աղաւնիէն կը հանկէր իրեն , Աւահէ յայնժամ սրտայուզութեամբ մը ըսաւ . մարդիկ երբեմ իրենց կամաց հակառակ չուզելով կը խոնարհին Ճակատադրին . ուշ մացինք նաւ ելլելու ժամանակը հասած է դնալ պէտք է , և ծովու եղերք իջնելով նաւը մտած ժամանակ Աղաւնին և նորա մայրն հոն ծովու եղերք կանգնած տեսաւ . Աղաւնիի աչքը արտասուքով լիցուած սրտատրոփ իւր նշանածին կրդիտեր . Աւահէն առանց խօսելու զլխոյ յարդական խոնարհութիւն մը ընելով Աղաւնիի մօրը . և աչքի ծայրով Աղաւնին նայուածք մը նետելով դառնացիալ սրախ նաւ մտաւ . և անմիջապէս նաւը առադատները պարզելով սկսեց իւր Ճանապարհ շարունակել . Աղաւնին իւր աչք չ'եռացոց նաւը դիտելէ մինչեւ որ հեռաւորութիւն զայն իսպառ յափշտակեց իւր տեսութենէն և աներեսոյթ եղաւ . սիրոյ Ճանապարհէն անցնողներ միայն դիտեն թէ նոյն բաժանման միջոցին ի՞նչ կ'զդային այն երկու սիրածին դեռափթիթ սրտերը ի՞նչ կրկրէին իրենց մէջ . նոքա անշուշտ անձայն սիրոյ վերաբերեալ ամէն բան սրաէ ի սիրտ իրաւու կը հաղորդէին , և այն սիրայօդ զդայական անմոռնչ խօսակցութիւնները որք փոխադաբար սրտէ ի սիրտ ներշնչեցին անոնց ամէնքը սիրոյ պաշտպան երկնային ոդին չուզեց որ երկրի վրոյ թայ . այլ անոնց ամէնքը ի բ. եւ դարձնան նորսովթիթ դեղու-

ցիկ ծաղկելներ ժողովելով ծրար մը շինեց և իւր թեւերու վրայ առած Աստղիան երկինք վերասլանալով անոր հետալուր լուելեաց հաղորդեց :

ԲՆՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԲՆԻ ՄԷՋ ՀԻՆ ՄԵԽԱՍՏԱԿ ՄԸ

Գարնան զուարթ ամիսներու Ապրիլի վերջի օրերու մէջ զեղեցիկ և զովարար օդը ստուերամած անտառը մամուապատ զեամինը բարիլներով հիւսուած կանանչ ծաղկալի և տերեալի ծառերը բարձր սարերու ձիւնապատ զաղաթներէն վար սահած ջրվէ ժները փոքրիկ գետակները և առուակները նոր լեզու ելած ձուլացող թութակները և սոխակները անտառի մէջ սատոստող վայրի այծերը չինչ հայելիի նման թխատեսիլ կապուտակ հանդարտ ծովակ մը որու արեելեան կողմը կըդանուէր Անայ դաւարը այս ծով իւր ծոցը կրկրէր չորս կղզիները . որոց մինն էր անմարդաբնակ և թունոց բնակարան Առտէր . երկրորդն սոյն կղզոյն հարաւային կողմը կըդանուէր Ախմամարայ կղզին . որ արծրունեաց ժամանակէն մացեալ հին փառաւոր վաճք մը . և միարանութիւն ու կաթողիկոսարան և կաթողիկոս մը ուժեր . տաճարի վեհ հնութիւն և որբասաշ քարերու վրայ փորադրուած պատկերները իրենց քրիստոնէական նշաններով կուզային տեսնողի աչաց զմայլումն տալու և արծրունեաց հարաւայութիւն յիշեցնելու իրենց կրծնական ամէն զգացումներով , սոյն հին յիշատակալայրի աթոռոյն կրաիրէր հայոց ազդի Ախմամարայ տանն կաթողիկոս և 1իմ անապաններու կղզիները իրենց ծոց կըկրէին մէկ մէկ վանատուն , վարդապետ , սարկաւադ և քրծազգեաց միարանները , որք ծոմապահութեամբ պահօք և աղօթիք օրը եօթն անդամ ժամերդութեամբ և սաղմոնսիք ու օրհնութեամբ Աստուծոյ անունը կըփառաւորէին այն նուիրական տաճարներու մէջ : Սոյն ծովային և ցամաքային բնութեան հինալի տեսարանի մէջ չեն փոքր բլրակի մը վրայ աղզին բեկորներէն մնացեալ հին մէջ

ԵՐԿՈՒ ՈՒՂԵԽՈԲՆԵՐԸ

Բնութեան սոյն հրաշալի տեսարանի մէջ երկու գծրաղբները զիշերուան մշուշներու մէջ ծածուկ կը մայիսն . կարօտ իրենց յօդնած և թալկացեալ մարմնը կադդուրելու համար պատառ մը հացի և հանգիստ ու աներկիւղ քնոյ մը . մանաւանդ քունը որ մարդոյս սրունքները անկարող վիճակի մէջ կը դնէ յօդնած մարմնը վերցունելու , մեր ուղեղուները այս զիշեր ժամանակի մէջ յօդնած և իրենց ձանապարհ կորսնցուցած սեւեռեալ կը մայիսն մթութեան մէջ . ինչպէս որ մադնիսացեալն զինք մագնիսացնողէն : Ստէպ տեսնուած է որ անմինելի դիպուածոց մէջ հրաշալի խորհրդաւոր գործերը պահուած կը լինին , որք յետոյ գերբնական զօրութեամբ մը կը յայսնուին , միենոյն սքանչելիք պատահեցաւ մեր ուղեղուներուն , վասնզի նախաինամական տնօրէնութիւն իւր անդիմադրելի զթութենէն շարժեալ օգնութեան ձեռք կարկառելով կուզէր կադդուրելով աղատել զաննք , որք մոլորեալ ոչխարի պէս անտառի խորերու մէջ անոք անօդնական վայրենի կենդանեաց զիշակեր զապանաց որջերու մօտ լքեալ ընկած էին առանց զիանալու իրենց որ կողմզնալը : Այն պահուն մինչ զաղանաց աշուելի աշուելը զիշենք կահաբեկէր . ըստինն ալ արեմտեան սարերու ետեր մանելով իւր երեսը պահեց , բարձրահասակ ծառերու տերեները աստեղաց լոյս կը ծածկէր և զիշերուան խոր մթութեան վրայ խաւար մը ևս կաեւլցունէր ուրով ամէն առարկաները ամենէն սրատես աչքէն անշամ անտեսնանելի կը մայիսն . նոյն ժամանակի մէջն էր որ անբացատքելի զօրութիւն մը հետուն Ճրագի մը աղօտ լոյս տարաբաղդներուն առաջնորդ կը զըկէր . ինչպէս որ երբեմն հրեղէն լուսոյ սիւնը անապատի մէջ թափառող Մովսէսի ժողովրդեան կառաջնորդէր . մեր ուղեղուներ սոյն հրաշալի լուսոյն հետեւելով մինչեւ արշալոյս կը գալէ ին . բայց առանց չեն մը համնելու լոյս կորսնցուցին սոյն անականկալ և յուսահատ վիճակը հարկադրեց զիրենք զկայ առնուլ և լուսնալու սողասել , և արշալոյսի թմրեցուցիչ քունց

նաստան մը կը բարձրանար . մենաստան իւր հարաւային կողմն ունէր թաւախիտ անտառները և բարձր լեռները , որոց ստորոտ լայնածաւալ անտառներու մէջ կը ծածկուէին սոյն լեռները իւրենց ձիւնով ծածկուած զլոնները ամաբերու մէջ կը ծրարէին . բնութիւնը այս յերանց ոմանց վիճակը յեղափոխած , նոցա բը նախան երեսոյթ խանդարած դադաթները ծռած և խարխուլ վիճակի մէջ դրած էր :

Անտառի մէջ այծեամները այն դէղադէղ դալարիներու վրայ ճախիր առնելով սիդապանծ կը ճէմէին . ընձուղտ ամենէն բարձր ծառերու ճիւղերուն իւր վիզն երկարցուցած նոցա կանանչ տերեները և նրաբողբոջ ծիլերը կը կրծէր . ծովու մօտութիւն հզօրեղապէս կազզէր կլիմայի վրայ . և խոնաւութեան պատճառաւ հողը բարերի էր և պտղատու . անթիւ ծովային օձերը իրենց իրենց իւրշերէն ելած մենաստանի հիւսիսային ծառերու վրայ զետեղուած արեգական չերմութենէն կը տաքնային . ձուկէրը այն հանդարտ ծովու յատակը միմեանց ետեէն սրարշաւ կը վագէին միմեանց վրայ ելլելով զիրար կլանելու . ձկնորս կարթ ի ձեռնին զաննք իսիսու դժուարութեամբ կը որսար . այն ծովու մէջ ցցուած ժայռերու վրայ ցիրուցան տարածուած կը տեսնուէր խորտակուած նաւի մը բեկորները . ջինջ ծովու յատակը ամեսուգ կերպով կը տեսնուէր վիթխարի մննանօմի մը փայլուն պատկերը . սոյն զուարթ առուը զիշերը կը յաջորդէր . այս ամէն գեղցիութիւն և զմայլելի տեսարանը իւր ստուերի մէջ ծրաբը մեծ ճգամք :

Արդէն արեւը իւր զլուխ դէպ ի արեւմուտք խոնարհեցուցած էր . այս պահուս հիւսիսային կողմէն ամպային կոյսա մը հորիզոնի վրայ յայտնապէս կը տեսնուէր լուսինը նրածի մահիկի ձեռով արեւելքէն ելլելով սկսած էր իւր հորիզոնական զիծը յստակ կերպով ծրագրել . յայնծամ լուսնոյ դողոնջուն նկարը մենաստանի հիւսիսակողմը զտնուող ծովու հեղուկ մակերեսոյթի վրայ ցոլացած կը տեսնուէր :

Երկնից յստակութիւն զենիթի վրայ թանձրացող օղի մէջն իսիսու պարզ կը տեսնուէր :

գանոնք առզդայ վիճակի մէջ դրաւ երկար ժամանակ մը : Եթք արթնցան իրենք զիբենք Սորպ աւանի բարձրակատար լեռան զլուխը զտան , յայնժամ դոհութիւն տալով զիբենք պաշտպանութիւն կըսէին , այն անհրոյթ և պաշտպանողական ձեռք որ ըշմեզ աղասեց այս զիշեր ամեն չար և պատառիչ բազմաներէն երանի թէ ինքինք ցոյց տար մեզ մեր երսխաղիտութիւն յայտնապէս մատուցանէինք իրեն մեծութեան և փառաց : սակայն զիտեմք Վատաած իւր զործերու մեծ մասը թաղուն ուահել կուզէ : բայց մենք պէտք է որ նորա մնբայսարելի զործոյ մկայութեամբ ճանաշեմք նորա մեծութիւն և շնորհք ու ողորշմութիւնները է ինչպէս որ առ մեզ . այսպէս ալ առ համայն աշքարածք :

Երգէն զիտեմք թէ մը ուղեսորները թէ չափէն պելի յոդանած էին և թէ անօթի և հաց շունէին , կամաց կամաց Սորպ զիուզ զնալով իրենց ողեպահի հայը մորալով ճարեցին . մէծ ընկողենիի մը տակ նստելով հանդիստ քոն . մը քնացած երբ արթնցան տեսան որ օրը երեկոյ էր իրենց մուրացած չորաբեկ հայը աղբիւրի մը ջուրի մէջ թաղելով պարկեշառութեամբ ուստեւն վերջ իրենց դոհաբանական աղօթք կըմատուցանին բարերարին Վատուծոյ . օրը երեկոյացաւ երկնից կապուակ երեսի վրայ արգէն սկսած էին աստղները տարածիլ և լուսին իւր մահեկանե երեսյթով աղօտ լոյս մը կըսփուէր մեր երկբացունի վրայ , զարնան զեփիւները խիտ ծառերու տերեներու վրայ շփուելով սահուն կերպով մը սուլելով կանցնէին , այս խոր լուսութեան մէջէն մեր ուղենորներէն մին որ աշխատ երկասարդ մի թախծնալ սիրա մը ցոյց կուտար իւր ընկերովք :

Պէտք է զիտանալ թէ քանի մի օր առաջ այս երկու երկտասարդ ուղենորները պիտուածը բերած միացոցած էր , և որք զատ զատ նախտակառ կուղեւութիւն . և միշտ իւրաքանչիւր իւր նախտակառ խիստ դպտ շութեամբ իրեն դագունեաց կըվերաշպահէր , կ'ըսէր մինմ միսին , բարեկամ արարչակործութեան ժամանակ Վատաած տարերը ստեղեւով և բաղադրելով երկիրը ները արտադրեց . և ցամաքը ծովն բարձրացունելով մարդունց բնակութեան վայր առաջանեց բայց առաջանեց բնակութեան վայր առաջանեց :

Ներու շինութեան ձեւը չ'զծեց . այլ զայն մարդկանց հնարագիւտութեան յանձնեց . որ իրենց ձեռքով իրենց բնակարանները շինեն իրենց ուղած ձեւով . ուղենմ այս զիշերուան համար այս ծառի ճիւղ և տերեներն են մեր բնակարանը , և նորա ցցուած ոսերը մեր բարձրեն են , վերմակ մը կըպակսի , այն ալ թող Առուծոյ նախախնամական խնամք լրացունէ :

ԽՈՇՀՐԴԻՑՈՒԹԻՒՆ ՄԸ

Կ'ըսէր ուղենորներէն մինն , խորհրդաւոր ձեռք մը կայ , որ թրինից բարձր աստիճաններէն լրութիւն խաւարի մէջ ծրարած կըբերէ աշխարհի վրայ կըտարածէ . յայնժամ օդի մէջ երկրի վրայ պանուող ամէն կեն գանիները յարթնութենէ ի քուն կըփոխէ , վշտահար մարդկանց մատածութեանց ամենէն մեծ խորհրդատոն զիշերն է . ինչպէս որ զիտութիւն մարդուս միշտ մէկուսացնել կուզէ , այսպէս ալ վիշտերը մարդկանց մարդինը մէկուսացնել կուզէն . ինչպէս որ մենք մէկուսի եմք ընկերական խումբերէն և արակայ մեր հայրենիքէն :

Ընկեր , կայծ մը սիրաս կըյուղէ նպատակիս հասնելու , չ'զիտեմ թէ պիտի յաջողիմ թէ ոչ :

Սակայն կըհաւատամ թէ յարատե աշխատութիւն և երկայնամիտ համբերութիւն շատ մը կնճռուս խնդիրները լուծած են և ի հարկէ իմ խնդիր ևս իւր լուծման աւուր պիտի համնի . ուրեմն հարկին առ ջեւ գլուխ խոնարհելու է :

Կըտեսնեմ թէ ծերացեալ կաղնիները ձարձատումով կըխորակուի . և անոնց կըյաջորդեն իրենց արմատէն շառակիլեալ բողբոջերը և նորատունի ծառերը :

Ժողովրդոց ապրելու օրերու թիւ երը հաւաքելով , շարաթները ամիսները տարիները և դարերը կըկաղմն . այս յաջորդական հոսանքի մէջ բնութիւն և ժամանակ ձեռք ձեռքի տուած երկ-

նոյնին հեղինակութենէն իրենց յանձնուած պարտքերը կըկատառ բեն բնութիւնը մամանակի մէջ (առանց հաւասարութեան չափ և կշիռ նկատողութեան առնելու) փայտէ օրօրոց մը և փայտէ դադաղ մը շինած է : ՄԵկին ծնունդ և կեանք տալով օրօրոց կըդնէ . միւսին մահ տալով կեանք կըքառնայ ի դադաղ կըդնէ . ըսել է որ օրօրոցի յաջորդն դադաղն է , և օրօրոց ու դադաղ միմանց սերտ և մշտնջենաւոր դաշնակից հաւատարիմ եղայրներ են , դադաղ մտնոլն անձանօթ աշխարհ մը կըդնայ , որու վիճակի դաշտնիք տրամաբանից բացատրուած չէ , բաց ի Աստուածաբաններէն , իսկ օրօրոց մտնոլը օրերու թուզն հետ կ'ածի և կըզօրանայ օրմն ալ մարդկութեան շաբքի մէջ մեծ կամ փոքր տեղ մը կըբռնէ :

Այն մոտաց լոյս տալ պէտք է , զի միտք ինքնին խիստ ամուլ վիճակ մը ունի . թէ ետ տրամադիր է տեսածները և լսածները ընդորինակելու և անոնց օրինակին հետեւիլու :

Այս և խաւար մը կայ որք շարունակ իրարու կըյաջորդեն . լոյսէն իրնայ ամէն բարութիւնները ակնկալուիլ . իսկ խաւարն ամուլ է . իսկ անկէ բան մը չ'ծնիր . յաւիսենական անսպառելի աղբիր մը կայ յորմէ ամէն բան կըբդիմ բաց ի խաւարէն որ լուսոյ պակասութիւնն է :

Բնութիւնը իւր օրէնքներով զմարդիկ միմանց շատ մօտ արտադրեց . բայց կրթութեան և քաղաքականութեան ձեր եղանակը այլեայլ կլիմաններու ներդործութիւնները մեծամեծ անջրպեսները սահմանեցին անոնց . և զանազան վիճակները ստեղծեցին , մինն պատուայ գահոյն վրայ հանելով , միւսն մոխրի վրայ նասեցնելով : Սոյն զանազան աստիճաններու անոնով մկրտուած ամէն մարդու աշխարհ դալոյն և աշխարհէն ելլելուն ճանապարհ ձեւ և եղանակ միւսնոյն է . տարբերութիւն մը կոյ որ ոմանք ի բնուստ բարւոյն տրամադիր կըծնին . ոմանք ալ ի չարիս յաջողակութեան տղեղ բնազդութներով աշխարհ կուզան մինն տղէտ անուան տակ ամենուն ատելի և ամենուն զզուելի . միւսն կիտուն ամենուն սիրելի և ամենուն հաճելի , դիտուն կըշինէ , տղէտը շինուածը կըքանդէ . տղէտ կեթայ ռամկութեան աստիճանին կըհասնի , իւր լեզուն սանձել չ'դիտէ . կը-

խորհի այն անհեթեթ և այլանդակ բաներու վրայ , որք տրամաբանութենէն իսպառ հեռի են , կուզէ ըսել այն բաները որք լրջմտութենէն հեռի աւասպելաբանութիւններ են . կըխօսի այն ձեւ և եղանակաւ ինչպէս որ կըխօսին հողմերու շնչիւն և ջուրերու խոխոջիւն շատ կըխօսի և քիչ բան կըհասկցնէ . երբեմն ալ հասկցնել ուզածը իւր երկարաբանութեան մէջ կըկորմացնէ . երբեմն բնաւ շնօսելով ուրիշի սիրա կըկարգայ . և իւր մէկ նայուածքով շատ մը բաներ կըհասկցնէ , տղէտն անհնարն կ'առաջարկէ . զիտունը հնարաւորն և այն կարի զգուշութեամբ տղէտն կ'սկսի առանց նպատակի , զիտունի զործերն միշտ նպատակաւոր են . տղէտ սկսելոյն կընայի . դիառուն վախճանին և նպատակին կընայի :

Երկրագունդի վրայ սկսուած տղէտ անհատներն այն յաւիս տենական մանուկներն են , որք առանց իրենց զիտութեան և հաւանութեան կըմղուին դէսի այն նպատակը , որ իրենցմէ իսպառ անձանօթ է . ամէն ակումբներու մէջ լոկի խումբ մը կայ որ զօրաւոր ձայնից ետեւէն կերթայ . ինչպէս իսահակ հլու հպատակութեամբ Աբրահամու ետեւէն դնաց զոհ և սպատարագ լինելու . անհուն տարածութիւն և յաւիտենական մշտնջենաւորութիւն ու անմահութիւն մը կայ . ասոնց մէջէն մադիկ կներէն սահմանուած ժամանակը և նորա մաներսրդները , այսինքն վայրկեան , օր , շաբաթ , ամիս , տարի , և դար անձնեկ այն կաթիւներն են , որք զալով և զնալով յաւիտենականութեան անհնութեան մէջ կընկղղին ժամերու նախորդը իւր յաջորդի մեծ քոյրն է . ասոնք իրարու ձեռքէ բռնած իրարմէ անբաժանելի կերպով կըքալեն . երջանիկ մարդկանց աշքի առջեւէն իսխոտ արագ կերպով կ'անցնին . իսկ թշուառներու և տառապեաններու համար շատ յամրաքայլ են . թշուառները զեհնապարաներու պէս քաւարանի մէջ անհամբեր կ'սպասեն իրենց ճակատադրին , գալանի զօրութիւններ կան . որք աշխարհ կըյաւզեն , ոմանց կուտան բազմատեսակ ուրախութիւն և զուարձութիւն , ոմանց կուտան ամէն տեսակ ցաւ և տրամութիւն ու թշուառութիւնները թշուառութեան դպրոցին ելլուները խստ լաւ կերպով կըհասն իրարու լեզուն . և զլորուելու վատանդէն զերծ մալու

Համար իրարու կը կութնին . թշուառութեան տանջանքներով լի կեանք ունեցաղները տոկուն սիրու և համբերատար ողի կ'ստանան , որք ովլիանոսի ալիաց դէմ տոկացող ժայռերու պէս անշարժ կը մնան իրենց զարկած ալէտներու դէմ : Թշուառի արտաստաց կաթիւները կրխօսին այն ամէն բաները , զորա կապկապեալ քեզուն չկը մնար արտասանել ողորմութիւնը թշուառի սիրու իւր բոյնէն հանելով երախտառորդի ձեռաց կրյանձնէ . թշուառը իւր ունեցած ամէն բան կուտայ , միայն մէկ բան կրպալընի . այն է չ'հարկադրել զինք իւր խիշճը բռնի կերպով մեռցունելու :

Մարդիկ մշանջենաւոր ծարաւ մը ունին , որուն իրենց հասկրցած լեզուվ աղատութիւն և հաւասարութիւն կը մնին . սակայն բացարձակ աղատութիւն ձեռք բերելու խորհուրդները երազներու կտրդէն կրհամարուին ըստ իս . վասնզի բնութեան չկամցածը չ'զիտեմ թէ մարդիկ ում ձեռքէ խլել կուզեն , եթէ բնութիւն ուզեր մարդկանց բայցարձակ աղատութիւն նուիրազործելու , զանոնք հաւասարութեան մէջ կ'արտադրէր մինն զօրաւոր միւսն անզօր . մինն մտացի . միւսն տկարամիտ չէր արտադրէր . այսպէս ալ մրցն կեանք օրորցի մէջ խղդել . միւսն տանել հարիւրամեայ հասակին հասցունել . ուղղութեան տարադէպ զործողութիւն չէր կատարէր , այս զարտուղի անհաւասարութիւնը բնութեան մէկ անիմանալի դաշտնի խաղն է . որ աշխարհի սկիզբէն մինչեւ ցայտօր թաւուն պահուած կը մնայ : Մարդկանց աղատութիւնը սահմանափակ է , խորհուրդը , աղատութեան սահմանը օրինաց մէջ զետեղեց : Չե՞ն սիալիր անոնք որք բացարձակ աղատութիւն և բացարձակ հաւասարութիւն կերաղին . ես կը կարծեմ թէ նոքա ուամիկները կը խարեն , անոնց ձեռքի եղածը յափշտակելու համար : Սահմանագական հաւասարութիւն մարդկանց աշխատութեան և սեփականութեան սահման կրկոխոտէ և զօրաւոր ծոյլերուն իրաւունք կուտայ . իշամեղուներու պէս համեստ մեղը շինող տկար և աղքատներու աշխատութեան իրաւունք յափշտակել և իրենց սեփականել . սահմանագական աղատութիւնը զօրաւորները վայրենի կը նէ . եթէ չես հաւատար՝ զատաստան ըրեծովու ձկանց երկնից թունոց և երկրի վրայ դանուղ դաշտանաց

և անամոց վրայ և դարձեալ խորհէ քու անձիդ վրայ . հոյ պիտի հանգուիս թէ բացարձակ աղատութիւնը զն սասկար է և վլտանդաւոր մարդկանց համար . բացարձակ աղատութիւն փրկուրողներէն կայսրէն սկսեալ մինչեւ վերջին սոսկական և ոչ մէկ կրցած է ձեռք բերել , բոլորի յոյսն ալ թեթև երազներու պէս եկած ու անցած զնացած են : Սահմանագակ աղատութիւն , և բոնագետական տիրապետութիւն երկուքն ալ խոսելի են , զովելի են համեստ և պատուաւոր միջասահմանի մը մէջ երբ պարտոց և իրաւանց վրայ հաստատուած լինին :

Ըստ է իմաստասիրի մէկը շաղատութիւն այն զեղանի սիրու հին է որ զինք սիրող կը մնանկացնէ առանց անոր մօտենալուն Այս աշխարհ մը բարձր իջեան մի է . յորում մարդիկ կիջնան ու կելին անոր բարիք վայելելու մեծ յուսով . բայց շատերը կենաց ճանապարհի մէջ իրեն ապուշ գիծով խելացնուր իրենց դատումը կը կորսնցնեն . կարծողներ կան թէ կրնան աշխարհին յաղթել . սակայն մինակ առաքինութեան հեղինակն էր որ անոր զլուխ խոնարհեցոյց . մարդիկ շահմալութեան ծարաւ մը ունին զոր ձեռք բերելու համար ձովու ձուկերու պէս զօրաւոր անզօրի վրայ կելիք զայն ջուրի խոր ընկլմելու և նորա ճարակը ձեռքէն խլելու . առոնց մէջն բաւականակեր խոչեմ և համբերողը շատ չթափառուիր . իսկ ընչափաղները միշտ հալածման և նախատանաց ենթակայ են . անիրաւին ասպարէզ չբանալու համար խորին իմաստութիւն , մտաց հաստատութիւն , անշառարդարութիւն , երկաթեայ ձեռք , և հրեղէն սուր պէտք է . Բնութիւն քանի մի պարագայի մէջ անարդար բաշխութերը ըրաւ , որով մարդկանց իրաւայի տրտունչները հրափիրեց իւր վրայ . Բայց նա գեղեցիկ հնարագիտութեամբ մը մարդկանց մտաց ծանր հիւանդութիւնները տալով զանոնք նախապաշարեց և բսել տուաւ թէ մէկի զօրաւոր ծնիլը և միւսի անզօր լինելը երկնային հեղինակութեան մէկ կարդադրութիւնն է :

Բնութիւն ինքինք արդարացնելու համար ուղեց որ Աստուածային հեղինակութիւնը մարդկանց քննադատութեանց ենթակայ ընել տայ . մինչդեռ բնութեան հեղինակ այս պաշտօնը կատարելու հոգը իրեն ընտթեան տուած է , ընտթիւնը ինչպէս որ

մարդկանց գիմաց գծադրութիւն միապէս չարտադրեց ։ այստեղ ալ անոնց զանազան կամք և կարծիք ու համազումներ տօւաւ ։ բնութեան այս սահմանադրութիւն ընկերական աշխարհի խաղաղութիւն վրդութեց և ալեկոծութեան մէջ դրաւ ։ սակայն Ասուածային քանականութենէն օժանդակուած, բնութենէն աւելի խմասուուն մարդիկ զեղեցիկ հնարագիտութեամբ մը բնութեան սահմանադրութիւն յեղաշրջեցին. երբ զանազան կամքերը և կարծիքները ու համոզումները հաւաքելով բանականութեան օրինաց ուռկանի մէջ զետեղեցին ։ թէպէտ բնութիւն սրտմտեցաւ մարդկանց այս հնարագիտութեան վրայ բայց վրեժինդիր եղաւ զի համաշխացաւ թէ մարդկանց հնարագիտութիւն իւր բանական սահմանադրութենէն աւելի օգտակար և բանաւոր է մարդկանց վիճակը խաղաղութեան մէջ պահելու համար ։

Դրութիւններ կան, որոց զեղս մարդկան սիրտ կը յափշաակեց միւս կողմէն նոցա աղատ կամեցողութիւն կը կաշկանդէ, վայրկենական խոստումներ կան, որք մշտնջենաւոր հարկ կը լինին, ես կը յարգեմ այն ամէն աղատութիւնը, որք բանականութեան օրէնքներով նուիրագործուած են, հաւատարմութեան ուխտ և դաշնիք մը կայ, որ ոչ թէ բնութեան, այլ բանականութեան օրէնքով կը հաստատուին, մարդ մը իւր բանականութիւն չանպատուելէն առաջ չամարձակիք իւր դաշնիք դրժել, այս պարագայիս մէջ ոմանք բնութեան օրէնքին, ոմանք բանականութեան օրէնքին ետեւ զնալ կուղեն, ըստ իս բնութենէն աւելի բանականութեան զծած ձանապարհէն զնալը նախապատի է ։

Այս խորհրդաւոր և հրահանգիչ խօսքերը վերջանալու մօտ էր երբ քունը զիշերուան ողին նոցա վրայ հանելով զզայարանքները կը շնչայէր, մարմինը զօրացնելու տկարութիւնները մեղմաշնելու ։ անոնց մարմնաւոր և մտաւոր աշխատութենէն յոդնած զդայարանքներ ջեղերը ուղեղ և ամէն մկանունքները ու զործարանները կազդութելու ։ Քունը բարերար ձեռք մը ունի, որ թմրութեան ծալիկները սփռելով մարդկանց վրայ զանոնք անզայ վիճակի մէջ կը դնէ, այն պահուն մարդիկ իրենց ամէն ամեսածները լսածները զդայածները կը մուանան ։ Այն քաղցր

քնոյ մէջ մեր ուղեարները կենաւանորոգ հանդատութիւն մը ձեռք բերին, յորմէ մնձ վստահութիւն աւին իրենց ձանապարհ շարունակելու կարողութեան մասին ։

Ա. Բ. Պ. Ա. Հ. Զ. Ե. Ե. Ո. Վ. Ե. Խ. Ո. Վ. Ե. Խ. Ո. Վ. Ե. Խ.

Ա. քաղաղի ձայն ։ որ գերբնական գօրութիւն մը ունի, զիշերուան ամէն շար ողիները կը հաղածէ ։ ինչպէս որ արշալոյսն ալ զիշերային ջղջիկները աներևոյթ կը նէ ։ Մեր աղեօրները արթնցած անհամբեր կ'սպասէրն աքաղաղի հրաշալի ձայնին, և արշալուսոյ փրկաւէտ դրանց բացման ։ որք զիտես թէ իրեն զիշերուան դահիճը սուր ի ձեռին կուզէին ըռապէներու աջորդական թիւերու շղթաներ խորակիել, յուսացած արշալոյսն շուտով ձեռք բերելու մծ անհամբերութեամբ ։ չասաւ սպասած ժամը, առին ուղեորները իրենց հային պարի և դաւազաները հեռացան այն դիարուածական յիշաւակավայրէն և սկսան անտառի մէջէն վազող փոքր առուակի օձապայտ հոսանաց հետեւի և իրենց ձառապարհ զէպի հարաւակողմ առաջ տանել ։ Նախընթաց ասսութի ջերմութենէն ծառում առնող զոլորշիներն թանձր և սեաթոյր ամպ մը և աղմակերպած էին որոց կը նկերանար իրբե ուղեկից ։ մերթ ընդ մերթ կ'որոտար անձրեւելու մծ սպասանելուք իսնաւ հով մը կը փէքը խառն ջրային փոշերով ։ սակայն զիտես թէ խորհրդաւոր ձեռք մը զայն հեռու կը պահէր իրենցմէ որ չ'վաստին ։

Այն խոնաւ ոիշերը իւր հետ վճիտ ցող մը բերած և տարած էր այն լայնածաւալ անտառի թուփերու և տերեններու վրայ, ուղեօրները անտառի բլբակի մը զառիվայրի աւազուացներուն հետեւելով ծանր քայլերով տափարակ գաշտավայրի մը կ'առաջնորդուէին ։ արշալոյսի անհետանալէն քանի մի րուսէէն յետոյ զաշաի հիսխակողմը ծովեղերքի մէկ անկիւնը փոքրիկ զիւլ մը կըս ենտեւ ։ ուղեօրք իրենց քացլերը արաւա

դերվի այն զիւղը հասան, հոն սկսաւ անձէնը . փայլակը այն ուետեսը ակօսելով օղը հրեղէն շեղանկիւնովմը ձեզքեց կայծակը տեւէ ի տեղ ծառէ ի ծառ սստոսաելով երկիրը ցնցեց . և զան ձեղքելով կերթար նորա խոտերու մէջ կ'անհետանար . անձրւները երկինքէն իջնող նետերու պէս ինկած տեղերնին կը ծակէին . անձրւնին փոթորիկ կըյաջորդէր, որ առաջ կողար ամպի և հովի ելեբդական հոսանաց միաւորութենէն :

Երբ տաքերաց խոռոչութիւն իրենց նախնի խաղաղութեան վերագարձաւ կըսէր մեր արամարան ուղեորը խիսա սքանչելի են բնութենէն պատրաստուած ամէն տեսարանները, մանաւանդ գարնան սիրուն տեսարանը, որ մարդկանց հոդին իրենց մարմինէն բաժանելով յերկինս կըվերասլացնէ Աստուածային անհուն տարածութեան մէջ դանուած սքանչելեաց վրայ զմարդն կը հիացնէ և կ'սքանչացնէ :

Ի՞նչ բարձր հեղինակութիւն . ի՞նչ մեծ ձարտարապետութիւն ի՞նչ սքանչելի հանճար . ի՞նչ վեճ՝ տեսարան :

Կընդունիմ՝ թէ հազիս այս մեծ հեղինակութեան շնչոյ զօրութեան մէկ արդիւնքն է . նա է սէր արարիշ ամենայն էակաց կենաց և մահու, սրաով և հոդով կըխնարհիմ անոր սաից պատուանդանին :

Սքանչացեալ կըաենեմ երկրու վայ բնութեան քերկրառիթ տեսս բ սնը . նորա սքանչելարտեսս կերտուածները, դեղեցիկ պարակները, անուշահոտութիւն բուրող ծաղիները, վայրի և ընաանի ծառերը, կանանց սերեները, ծաղիները և սըստուները, լայնատերեւ հսկաց բնկուղիները, ցեղեցիկ թթենիները, որք իրենց կանանց դլուխները զեպի վեք բարձրացացած երկինք աղօտ կաղուտակի վրայ սքանչելի նկար մը կըձեացնեն. այս շնորհալի տեսարանը անբացարելի յափշտակութեամբ ըզսարդն տարօրինակի կերպով նոր երեակաւական աշխարհի մը կառուածորդէ : Սակայն չ'զիտեմ թէ բնութիւն, թէ արարչապետի ամենաղօր ձեռք ժամանակի եւանակներու մէջ իրաւու ներհաջ փոփոխութիւններ դրաւ : Գեղեցիկ դէմ տպեղ, հաճելիկ դէմ ահաջ երեսյթներ սահմանալով, զարնան դէմ ձմռ մը, ամառան դէմ աշուն մը կելլէ . ձմռուան մէջ սոնկերը կըդօւա-

նան, տերեները կըթափին, քաղցրութեան դառնութիւն կը յաւ ջորդէ, ազրիւները կըսառին, ձիւն, անձրեւ և կարկուաները կըաեղան, բնութիւն կուլայ և կըախրի . հողմբը զնառեր, և տոնէր իրենց զեղեցկութենէն կըմբկացնեն . և ղանոնք իւրեաց աերեներէն կըզրկեն : Զեփի ուները խորշակի կըփառուին քաղցր հովերուն հալմերը յաջորդելով կըմոնչեն, և մարդոյս մարմնոյ մարմը կըչորացունեն . այս օրերու մէջ բնութեան ախրութեան հետ ամէն բան կըախրի ու կուլայ, սոխակներու ու թութակներու ձայները կըլուն . անոնց տեղ կըյաջորդէ զիշա-կեր աղուաներու վայնասուն :

Լեռները և դաշտերը զմարգիկ հիւրընկալելու ասպնջական թենէն կըդադրին . յայնժամ մարզն բնական թափէներով . լի սիրա մը կըզենու . և կ'սկսի չէն և բնակարան փնտուել . տուն կըմտնէ . պատուհանները կըզոյէ . տուն չունեցողն չ'զիտեմ թէ ուր կերթայ բնակելու :

Այն օրերու մէջ արեգակն անդամ իւր ջերմութիւն տալու կրպանայ . Մարդոյս համար յայնժամ զգեստ, բնակարան, կըակարան և կըակ պատրաստի կերակուր պէտք է . չունեցողները ի՞նչ կընեն արդեօք . այս օրերն են որ թշուառներու յոյս ծոցա սրաէն կը հեռացնեն, և ղանոնք ձմռուան փլատակաց տակը թաղելով անհետ կ'ընեն :

Հեռատեսը ամէն բան ամառը կըպատրաստէ, և ձմռ հանդիսա կեանք կըվայելէ . իսկ կալճատեսն ամառը շաշխատելով ձմռու մերկ և անօթի կըմաց . ձմռը խոր վիրապ մի է, որ ամէն ծոյլերը և հարկէն բռնադատեալ թշուառները իւր անդունիներու մէջ կըթաղէ . անիկա քաւարան մի է որ ամէն ծոյլ ունիները սառնային բռվի մէջ կըզաէ, և կիսամռ դուրս կըհանէ ըսելով, գնա՛ այլես մի մեղանչէր, աշխատէ որ չ'մունիս Քանդեյէք ձմռուան չենքի պատերը և տեսէք թէ որչափ տառ ուպակալ ողիներ կըգտնէք այն փլատակաց տակ . որ մահամերձ վլճակի մէջ կըհեծկըտան . խնամցլը ծերերը, հիւանդները, և անկարուծերը . բայց կամ կըթեցէք և կամ թող առէք որ անշխատ կենօք ծոյլ ապրողները մեռնին, մի զթաք անոնց զի նոքա արդէն անիմաղ միուետներ են . և ընկերական աշխար-

Քի չար օրինակիներ , ատոնք անհպատակ կ'սպիրին , և իրենց զբարանական այլանդակ մեծաբանութեամբ կըսնանին : Բնաւ բան մը մի յուսաք այն ծոյլ և խեղչ ու անզօր մարդիկներէն և տղետ մողովութէն , որք զուրկ են որոշ նպատակէ , զօրաւոր կամցողութենէ . տակաւին մանկական հասակն ունին նորամուօք կարձատես , խորհրդով խակ են . այսպէս ևս զուրկ են ուրոշ սկզբունքներէ , խղճի խայթէ . քալել կուզեն դէպի անհատական փառաւորութիւն քան թէ հանրական ապահովութիւն . կըխաբուին աւելի անձնական շահերէ քան թէ հանրական բարիքներէ :

Այդ ցիրուցան մարդիկ չէ կարելի որ կարողանան իրենց միհակը սարուղել , և մարդկութեան կատարելութեան համակիլ գոքա զիրենք յետս կասեցնող զօրաւոր պատճառ մը ևս ունին . որուն երկիւղ՝ կ'ըսուի , անիկա այդ անհատներու սրտի մէջ մուաք գտած անոր մէջի եղած կենսական ամէն քաներ կրծելով տարած սպառման վիճակին հասուցած է , այդ երկիւղը թէպէտ հանրութեան մօտենալէ կրղդուշանայ , բայց անհատները կըլափէ , և կ'ունշացնէ . այդ ողորմիլի անհատներու իրաւանց պաշտպանութեան դրութենէն ծագումն առած է հաւաքական միութիւն . և միութեան կաղմակերպութենէ ծնած են ժողովուրդները , ժողովուրդ չիմունիր միշտ կենդանի է . վասնդի անիկա ազդութեան ողի կազմող տարրն է :

Եզդաց և ժաղվրդոց մէջն ամենէն իմաստուն անոնք են . որք զիան իրենց զիտութիւնը մարդասիրութեան ծառայեցնել , անխորհուրդ խումբ մը կայ որ չափէն աւելի հեշտական հաճոյից ետքէն դնալով և իւր ուղեղը հալեցնելով աչաց ձրաղի իւղ կըշինէ և կը վառէ , և իւղը սպառած ժամանակ իւր կենաց կանթեղը կըմարի : Գեղեցիութեան ետքէն վաղողներու իղձը կը նմանի մը երկրագունդի , և նորա արքանեակ լումոյ որք շարունակ իրարու ետքէն կըվաղին բայց միմեանց չեն հանդիպիր :

Գեղեցիութիւն մը կայ , որ ամենու համար ըղձալի է , անիկա բնութեան խորերէն դուրս ելած ժամանակ ծածկոյթ շուշնոր , զի անմեղ էր . բայց երք մեղանչց իւր անմեղութիւն կըսնացուց , և մեղաց հետեւանքն ամօթ զդաց . մարդն մնաց

տղեղութիւն թաղուն սպահելու համար զեղեցկութեան ծածկոյթ հնարեց : Հպարտութիւն մեղք մը ծնաւ աշխարհի մէջ , անմեղ և թեան հետ մարտնչելու համար , և այդ մեղք փոփած ողի մը անի , ինչ բանի որ հպի՝ կընեխէ և կ'ապականէ . աշխարհի մեծ մասը կըսակայ տակէ և խոյս կուտայ . սակայն խիստ քիւրն են որ կըյաջողին նորա որոգայթներէն զերծ մնալու :

ՀԱՄԵՍՏ ԸՆԹԻՒՔ ՄԸ ԵՒ ԳԻՇԵՐՈՒԱՆ ՔԱՂՑԻ ՔՈՒՆ ՄԸ

Նրբ այս խօնքերը կըլիքրջանար ժամանակը զիշեր էր , լուսին մերթ մշուշներու մէջն իւր աղօտ երես ցցց տալով սենեակը կըլուսաւորէր , մերթ արակերու տակ սողալսկ խսպառ կըպահուեր և ուղերները մթութեան մէջ կըթողուր , ահա այս պահուս տանուտէր սենեակ մոնելով իւր հիւրերը համեստ ընթրիքի մը կըհրաւիրէր , որք իրբեւ շնորհք վայելեցին զիւղացիի տան մէջ թան ապաւր մը դարիկ հացով . այս զիւղացիները անտառի բնակիներ լինելով խիստ շատ փայտ ունէին , զորա կըվառէին շարունակ (փախանակ Ճրագի) անով կըլուսաւորէին : Ընթրիքէն վերջ ուղերները խորին երախտաղիտական ձայնիւն և կրօնական ջնդմունդութեամբ թեւերնին տարածելով զոհարանական աղօթք և շնորհակալութիւն մը յայտնելն վերջ իւրենց սենեակ դարձան : Կըսէր տրամաբան ուղերը իւր ընկերոջ ընկեր զիշերուան մութը և յոգնած մարդկանց քաղցր քոնը ամենէն զեղեցիկ պալասը , և ամենէն պարզ ու աղքատիկ զեղչկական տունը միւնցն հաւասարութեան մէջ կընեն , յոգնած մարմինը չկընար ասոնց մէջ զանալանութիւն զնել . ուրեմն հանգիստ քնացիր որ արթննալէդ վերջ ելլեմք ու քալեմք :

Երբ մինչ կըհրացանէր թէ երբ պիտի ծանապարչ լլեմք զիշերը : Նու կըպատասխանէր , եբբ ելլենիս յայտնի

չէ . վասնզի քոնը թէպէտ մահ չէ . բայց մահուան նղբայրն է , մենք անոր իշխելու շափ զօրութիւն շունիմք . ուրեմն պիտի սպասեմք մինչև որ մեր մարմնը նորա տուած թմրութենէ կատարելապէս կազդորուի . այն ժամանակ քունը ինքնին մեզմէ կը հեռանայ . և արթնութեան կենսական աղջարար հնչակը մը զգացմանց աղդելով կսթափեցնէ զմեղ քեոյ դինովութենէ . յայնժամ զօրութիւն կունենամք ելլելու և քալելու :

Երբ արշալոյս իւր լուսոյ բարի գոները բացած իւր տուած լուսոյ բարութեամք երկիրը կը փառաղարդէր , յայնժամ ողեղուները պատրաստուեցան Ճանապարհ ելլելու . զիրենք հիւրըն կարող տանուտէր , որ խիստ բարի մարդ մի էր , անոնց մօտենալով ըստ զեղչական պարզութեամք . իմ ալնիւ հիւրերս . ձեզ իրաւոնք չեմ տար առանց նախաճաշ մը ընելու իմ ալքատիկ տունէս բաժնուելու . ինձ պարտ է հրաւիրել զձեզ Աստուծոյ տուած բարիքներէն ձեզ ընկած բաժին կաթ և մածուն ու կտոր մը զարիէ հաց ուտել յետոյ Աստուծոյ պահապան հրեշտակի առաջնորդութեամք մեկնիլ , հիւրերը արդէն իրենց վայելած մարդասիրական շնորհքներէն և բարիքներէն մեծապէս դոհունակութիւն և շնորհակալութիւն մտառցանելով յայտնեցին թէ , հիւրի մը արժանաւոր յարդանք և մեծարանք ու բարիքները ընդունած եմք . ընդունեցէք մեր շնորհակալիր և երախտաղիտութիւնը . և աղատութեան հրաման տուէք մեզ մեկնելու , զի երկար է մեր այսօրեայ Ճանապարհ առ այս աճապարում . տանուտէր իրենց առաջնորդելով դիւղէն դուրս հանելն վերջ Ճանապարհ ցոյց տալով ետ դարձաւ :

ԽՈՏՈՐՈՒՄՆ ՈՒՂԻԴ ՃԵՆԸՊԵՐՀԷՆ

Եշ մու ռւղեսրները արշալոյսին դիւղէն ելլելով սկսան իրենց Ճանապարհ առաջ տանել . սակայն իրեւ անհմտա մարդիկ այն Ճանապարհներն , չկարուցացան միշտ ողիլ քալել այն

թուաթիւտ մնառանենքու և աղառուածուս ինոներու մէջ , նորա փոխանակ դէպի արեւմտարք քալելու . իրալմանը յնտապարք գներով սկսան դէորի արնելիսն հիւրիս քալել . որով ողակ առաջնորդուէին կրկին դէօրի տռաջնի առուր իշեանը . ի հարկէ ասոր մէջն ալ Ճանապատադրի մէկ զալտնի խորհուրդ կար պահուած ողել որներէն անիմանուլի , որ մինը ու զերջն ի ցոյց դայ : Երեք ժամ իրենց ի խաղ ճանապարհուն առաջ տանելով յանկարծակի մուխներով ներկուած ֆայտ կտրող և ածու ի շինուկ շրու լեռնացի մարդիանց հանդիպեցան . ողեւորներէն մինն որ երկչուս պատկերի մը տակ ծածկուած էր , կ'ըսէր իր բնկերուն ոտոկումավ մը . բնկեր այս բողեիս ալոյ վայրինի մարդիանոց ձես քով մահուածուն վասնուներ և որովոց մաներ լարտած կրտեսներն մեր Ճանապարհի վրայ . և կրկառիածիմ թէ կրկին սատու կրքալեմք . որուն ի պատասխանի կ'ըսէր միւս , բարիկամիւ մահուածուն շատ վասնուներ և որովոյ մաներ բոլորն ալ մէկ վասնունէ . վասնովն մահը մէկ է . մահը բնութեան մէկ խոյզն է . անիկա թող զմել շահտրիկէ նա իւր հասուծ ժամկը մարդիկներէն թաղուն պահէլու համար իրեն և մարդկանց մէջ աեզ միթունիւն մը կրմուլու . ուսկայն այն հետառնեները ւ որք կը յաջուղին զերեղմանէն անգին մշտն լինեան որութիւն մը տեսնել . նորա միւս պատրաստ և կազմէ կրմնան տնոր հրաւերին հետեւլու . մասնաւ անդ թէ շնու ողեր երկոր ժամանակ առյի ցաւաշուտ մուլորակիր վրայ և կրել զիրենք կաշիանգոզ զերութեան շպմաները . բնու մի վախուար այն արկածէն . զոր մենք մահ կրկուշմք . անիկա որիշ բան չէ եթէ ոչ նոր դոյսութեան մը սկրուսմք , ստուդի մահ չկայ . այլ յարտակ և յօժարական ամբողջ աշխարհի յառաջնորդութիւն մը կայ դէ սի այն ընդհանրական դեղեցիւթիւն և կատարելու թիւն , որուն մէջ Աստուծու զորդեր կը վայցլին . և որք միշտ գլուք այն լաւաղոյն պայմանը առաջ կը քալեն . օր պիտի զայ որուն մէջ մարդիկ թուշոց սկես թեւ առներով պիտի թուն :

— Բարեկամ , յետին տատիճան զոր շութե ամբ հաւաքը ընծայիլ պէտք է ձեր ըստածներուն . զի մութ հմտութիւններէն իր կական ճշմարտութիւն առաջ զալը շատ քիչ սեսուած է :

— Երաւունք ունիք այդպէս ըստելու . վասնղի Նախախնամուն-
թեան դործեր անհասանելի են , մարդիկ կարողութիւն չունին
դատաստան ընել այն ամբողջութեան վրայ , որուն մէկ մասն
միայն իրենց տեսանելի և մտաց հաօանելի է ձեր առաջ բերած
վասնդի համար կը յայտնեմ թէ , այս աշխարհի մէջ զրեթէ
ամէն բան վտանգաւոր է . սակայն ամէնքն ալ հարկաւոր են .
Մաղձ զմարդն ցասկոտ և հիւանդ կ'ընէ . բայց առանց մաղձի
ալ կարելի չէ ասզրիլ , առողջացուցիչ գեղերը դառն արմատ-
ներէն առաջ կուրան չարեաց , մեծադոյն մասէն բարիքներ ա-
ռաջ եկած են , մարդիանց կիրքերը նաւի առազաստներ ուսե-
զնող վտանգաւոր սասակաշունչ հողմեր են , որբ շատ անգամ
նոյն առաջաստներ ի ծուենս ծուենս կը պատառեն և նաւը կը-
լարտակին : Սակայն եթէ այդ հողմերն ալ չիլինէին , նաւերը
չէն կրնար շարժիլ , և իրենց եղած տեղ . անշարժ մնալու պի-
տի դատապարտուէին . ուրեմն այս վտանգաւոր միջացներու մէջ
